ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2024 թվականի N 1078-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետով՝

«4.1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատություններում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց լրավճարների առավելագույն չափերը՝ համաձայն N 4.1 հավելվածի.».

2) որոշման 5-րդ կետում «հավելվածով» բառը փոխարինել «և N 4.1 հավելվածներով» բառերով.

3) որոշման N 1 հավելվածի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բաժնում «Գիտություն» և «Կրթություն» գլուխները միավորել և 26-35-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

Գիտություն և կրթություն		
26.	Պետ՝ ֆակուլտետի	5.44
27.	Պետի տեղակալ՝ ֆակուլտետի	5.20
28.	Պետ՝ ամբիոնի, ղեկավար՝ կենտրոնի	5.07
29.	Ղեկավար՝ խմբի, պետ՝ բաժնի	4.94
30.	Պետ՝ ցիկլի, բաժանմունքի	4.65
31.	Ավագ գիտնական վերլուծաբան	4.37
32.	Ավագ դասախոս, գիտնական վերլուծաբան	4.10
33.	Դասախոս	3.84
34.	Թարգմանիչ, խմբագիր	3.59
35.	Ավագ մասնագետ, համակարգչային սրբագրիչ	3.36

».

4) որոշումը լրացնել N 4.1 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ